ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ինտերտրիմ ԼԱ (Intertrim LA)

Լայն ազդեցության անտիբիոտիկներից է:

1 մլ լուծույթը պարունակում է՝ սուլֆադոքսին……200մգ

տրիմետոպրիմ……40մգ

լուծիչ……..մինչև 1մլ

Բակտերիցիդ ազդեցությունը գործում է և գրամ դրական, և գրամ բացասական այնպիսի միկրոբների վրա, ինչպիսիք են Clostridium spp., E. Coli, Salmonella spp., Haemophilus spp., Pasteurella spp., Proteus mirabilis, Shigella spp., Vibrio spp., Streptococcus spp., Brucella spp., Bacillus anthracis, Stapylococcus spp., Corynebacterium spp., Klebsiella spp., Fusobacterium spp., Bordetella spp.. : Ցուցված է օգտագործել ստամոքսաղիքային, շնչառական, միզասեռական համակարգերի, մաշկի և փափուկ հյուսվածքների բորբոքային պրոցեսների դեպքում: Ցուցված է գրեթե բոլոր կենդանատեսակների համար:

Ներարկել ներմկանային ուղիով, 1մլ-ն 10-15 կգ քաշին, 3-5 օրվա ընթացքում:

Հակացուցված է տվյալ պրեպարատի հանդեպ զգայունակություն ունեցողներին, հիվանդ երիկամներ և լյարդ ունեցող կենդանիներին, հղիության ընթացքում ցանկալի չէ: Հակացուցված է նովոկայինի, անեսթեզինի հետ ներարկումները, նույն ներարկիչի մեջ այլ դեղանյութերի հետ խառնելը:

Լիմօքսին-200 ԼԱ (limoxin-200 LA)

Տետրացիկլինի խմբի լայն ազդեցության անտիբիոտիկներից է:

1մլ լուծույթը պարունակում է՝ օքսիտետրացիկլին……200մգ

լուծիչ……..1մլ

Իր բակտերյոստատիկ ազդեցությունը գործում է գրամ դրական և գրամ բացասական այնպիսի միկրոբների վրա, ինչպիսիք են Bordetella, Campylobacter, Chlamydia, E. coli, Haemophilus, Mycoplasma, Pasteurella, Rickettsia, Salmonella, Staphylococcus and Streptococcus spp.:

Ցուցված է արթրիտների, ստամոքսաղիքային, շնչառական համակարգերի բորբոքումների դեպքում: Ցուցված է ԽԵԿ, ՄԵԿ և խոզերի համար:

Ներարկել ներմկանային կամ ենթամաշկային եղանակներով, 1մլ-ն 10կգ կենդանի քաշի հաշվով: Ներարկման նույն հատվածում չի կարելի ներարկել կովերին 20 մլ-ից ավել, խոզերին՝10մլ-ից, հորթերին և ՄԵԿ՝ 5մլ-ից: Մեծ դոզաների դեպքում ներարկել մի քանի հատվածներից: Երկրորդ ներարկումը կատարել 48 ժամ անց:

Հակացուցված է օքսիտետրացիկլինի հանդեպ զգայուն, երիկամների կամ լյարդի խիստ խանգարումներ ունեցող կենդանիներին, պենիցիլինի խմբի պրպարատների և ցեֆալոսպորինների հետ համատեղ ներարկումները:



Պենստրեպ-400 (penstrep-400)

Կոմպլեքս հակաբակտերյալ պրեպարատ է, որի 1մլ-ն պարունակում է՝
պռոկային պենիցիլին G……..200000ԱՄ
դիհիդրոստրեպտոմիցինի սուլֆատ……200մգ
լուծիչ……1մլ

Պրեպարատն ազդում է գրամ դրական և գրամ բացասական այնպիսի միկրոբների վրա, ինչպիսիք են Campylobacter, Clostridium, Corynebacterium, Erysipelothrix, Haemophilus, Listeria, Pasteurella, E. coli, Klebsiella, Pasteurella, Salmonella, Staphylococcus, Streptococcus spp. : Ցուցված է արթրիտների, մաստիտների, ստամոքսաղիքային, շնչառական, միզասեռական համակարգերի բորբոքային պրոցեսների դեպքում: Ցուցված է ԽԵԿ, ՄԵԿ, խոզերի համար;

Ներարկել թափահարելուց հետո ներմկանային եղանակով, հետևյալ դոզաներով՝
ԽԵԿ……1մլ-ն 20 կգ կենդանի քաշի հաշվով, 3 օր շարունակ
Հորթ, ՄԵԿ, խոզ……1մլ-ն 10 կգ կենդանի քաշի հաշվով, 3 օր շարունակ

Ներարկման նույն հատվածում չի կարելի ներարկել կովերին 20 մլ-ից ավել, խոզերին՝10մլ-ից, հորթերին և ՄԵԿ՝ 5մլ-ից: Մեծ դոզաների դեպքում ներարկել մի քանի հատվածներից:

Հակացուցված է պրեպարատի հանդեպ բարձր զգայունակությամբ, երիկամների ֆունկցիայի խիստ խանգարում ունեցող կենդանիներին, մակրոլիդների, տետրացիկլինի խմբի պրեպարատների հետ ներարկումները:

Ցեֆտիոնել-50 (ceftionel-50)

3-րդ սերնդի լայն ազդեցության անտիբիոտիկ է:

1մլ լուծույթը պարունակում է՝ ցեֆտիոֆուր……..50մգ

լուծիչ……1մլ

Ազդում է և գրամ դրական, և գրամ բացասական միկրոբների վրա: Ցուցված է ԽԵԿ-երի և խոզերի համար, շնչառական համակարգի ախտահարումների, մետրիտների և կճղակների ախտահարումների դեպքում:

Ներարկել լավ թափահարելուց հետո ենթամաշկային եղանակով ԽԵԿ-երին և ներմկանային՝ խոզերին:

ԽԵԿ՝ շնչառական համակարգի բակտերյալ ծագման ինֆեկցիաներ……1մլ-ն 50կգ կենդանի քաշին, 3-5 օր շարունակ

միջկճղակային սուր նեկրոբակտերյոզ……1մլ-ն 50կգ կենդանի քաշին, 3 օր շարունակ

սուր մետրիտ (ծնից 0-10 օր անց)…… 1մլ-ն 50կգ կենդանի քաշին, 5 օր շարունակ

Խոզ՝ շնչառական համակարգի բակտերյալ ծագման ինֆեկցիաներ……1մլ-ն 16կգ կենդանի քաշին, 5 օր շարունակ

Չի կարելի ներարկման նույն հատվածում ներարկել ԽԵԿ-երին 15 մլ-ից ավել, խոզերին՝10մլ-ից: Հակացուցված է տվյալ պրեպարատի հանդեպ զերզգայուն, երիկամների ֆունկցիայի խիստ խանգարում ունեցող կենդանիներին, տետրացիկլինի խմբի պրեպարատների, մակրոլիդների, լինկոզամիդների հետ համատեղ ներարկումները:

Պենբեքս (penbex)

Լայն ազդեցության անտիբիոտիկ է, որի 1մլ-ն պարունակում է՝
պրոկային պենիցիլին G……..200000ԱՄ
դիհիդրոստրեպտոմիցինի սուլֆատ……250մգ
բետամետազոն……..0.5մգ
քլորֆենիրամին……8մգ
պրոկային հիդրոքլորիդ……..15մգ

Ազդում է գրամ դրական և գրամ բացասական մի շարք միկրոբների վրա՝ Staphylococcus spp., Streptococcus spp., Corynebacterium spp., Listeria spp., Clostridium spp., Erysipelothrix spp., Pasteurella multocida, Leptospira штаммов Pomona, Grippotyphosa, Icterohaemorrhagiae և այլն: Ցուցված է գրեթե բոլոր կենդանիների համար, շնչառական, միզասեռական, հենաշարժիչ համակարգերի բորբոքումների, սալմոնելյոզի, պաստերելյոզի, կոլիբակտերյոզի, մաստիտի, գաստրոէնտերոկոլիտի, հետծննդյան և այլ ինֆեկցիաների դեպքում:

Ներարկել ներմկանային եղանակով, խեկ-երին և ձիերին՝ 1մլ-ն 20կգ կենդանի քաշին, 3-5 օր շարունակ, մնացած կենդանիներին՝ 1մլ-ն 10 կգ կենդանի քաշին:
Հակացուցված է պրեպարատի հանդեպ զերզգայունակ, երիկամային և սրտային խիստ անբավարարությամբ, հղիության վերջին եռամսյակում գտնվող կենդանիներին, ինչպես նաև գենտամիցինի, նեոմիցինի և կանամիցինի հետ համատեղ ներարկումները:



Վեիքսիլ ԼԱ 20% (Veyx yl LA)

Լայն ազդեցության անտիբիոտիկ է, որի 1մլ-ն պարունակում է՝
ամոքսիցիլին-տրիհիդրատ……229.6մգ
բուտիլ հիդրոքսիտոլուոլ……0.08մգ
բուտիլ հիդրոքսիանիսոլ……..0.08մգ

Բակտերիցիդ ազդեցությամբ այս պրեպարատը ազդում է գրամ դրական և գրամ բացասական միկրոբների վրա, ինչպիսիք են՝Streptocoecus spp., Haemophilus spp., Corynebacterium spp., Brucella spp., Shigella spp., Fusiformis s pp., Clostridia spp., Steptococcus faecalis, Salmonela spp., E. Coli, Proteum myrabilis, Proteus vulgaris : Ցուցված է խեկ-երի, մեկ-երի, խոզերի, շների, կատուների համար, շնչառական, մարսողական և միզասեռական համակարգերի բորբոքումների, ինչպես նաև արթրիտների, մաստիտների, մետրիտ-մաստիտ-ագալակտիա սինդրոմի, աբսցեսի, ֆլեգմոնայի դեպքում:

Ներարկել ներմկանային եղանակով, 0.5մգ-ը 10 կգ կենդանի քաշի հաշվով: Երկրորդ ներարկումը կատարել 3 օր անց:

Հակացուցված է տվյալ պրեպարատի նկատմամբ բարձր զգայունակություն ունեցող կենդանիներին, պենիցիլինի և ցեֆալոսպորինների հետ համատեղ ներարկումները:

Մաստիլեքս

Այս անտիբիոտիկի 1 մլ-ն պարունակում է՝
ցեֆալեքսինի մոնոհիդրատ……..35մգ
գենտամիցինի սուլֆատ……3.5մգ

Ունի բակտերիցիդ ազդեցություն գրամ դրական և գրամ բացասական մի շարք միկրոբների վրա, օրինակ՝ Streptococcus, Staphylococcus, E. coli, Pseudomonas aeruginosa, Klebsiella pneumoniae և այլն: Ցուցված է խեկ-երի և մեկ-երի մաստիտի բուժման համար:

Դեղանյութի օգտագործումից առաջ նախ պետք է ամբողջությամբ դատարկել կրծի ախտահարված բաժինը, ախտահանել պտուկը, ապա ներարկել ներպտկային եղանակով, խեկ-երին՝ 1 ներարկիչ ամեն պտկին (10մլ), մեկ-երին՝կես ներարկիչ ամեն պտկին (5մլ), 12-24 ժամը 1 անգամ, 3-4 օրից ոչ ավել: Ներարկումից հետո կատարել կրծի մերսում ներքևից վեր ուղղությամբ: Ամեն ներարկումից հետո 12-24 ժամ կթել չի կարելի:

Հակացուցված է դեղանյութի բաղադրիչ մասերի նկատմամբ բարձր զգայունակությամբ կենդանիներին:

Յոդոպեն

Հակասեպտիկ դեղամիջոց է, որի մեկ մոմիկում պարունակվում է՝
պավիդոն յոդ……..1.5գ

Յոդոպենն ունի հակամիկրոբային, հակաբորբոքային, ցավամոքիչ և վերականգնողական պրոցեսներնն արագացնող ազդեցություն: Ցուցված է կովերի և խոզամայրերի համար որպես կանխարգելիչ կամ բուժիչ միջոց արգանդի բորբոքումների, հետծննդյան բարդությունների, ընկերքի պահումների, վիժումների դեպքում:

Կիրառել ներարգանդային եղանակով, բուժման դեպքում՝ երկնվագ, ամեն անգամ 1 մոմիկ, 24-48 ժամ հետո 2-րդ մոմիկը դնել: Հատուկենտ դեպքում յոդոպենով բուժումը շարունակում են մինչև կենդանու առողջանալը: Կանխարգելիչ նպատակով օգտագործում են ընդամենը 1 մոմիկ: Խորհուրդ չի տրվում միարժամանակ դնել 2 մոմիկ:

Ինտերմեկտին

Հակապարազիտային այս պրեպարատի 1մլ-ն պարունակում է՝
իվերմեկտին……10մգ
լուծիչ……..1մլ

Ցուցված է խեկ-երի, մեկ-երի և խոզերի համար ստամոքսաղիքային, թոքային ճիճուների, արտաքին մակաբույծների դեմ պայքարելու նպատակով:

Դոզավորումը:
Խեկ-երին, մեկ-երին՝ 1մլ-ն 50կգ կենդանի քաշին:
Խոզերին՝ 1մլ-ն 33կգ կենդանի քաշին:

Ցանկալի չի ներարկել լակտացիայի շրջանում գտնվող կենդանիներին: Խեկ-երի և մեկ-երի մորթը թույլատրվում է ներարկումից 28 օր անց, իսկ խոզերին՝ 21 օր անց:

Բրովերմեկտին

Հակապարազիտային այս պրեպարատի 1մլ-ն պարունակում է՝ իվերմեկտին……10մգ

Ցուցված է խեկ-երի, մեկ-երի, ձիերի, խոզերի, շների, ճագարների, թռչունների մի շարք ինվազիոն հիվանդությունների հարուցիչների դեմ՝ ստամոքսաղիքային տրակտի նեմատոդներ, թոքային հելմինթներ, խոռոչավոր հելմինթներ, ենթամաշկային բոռի թրթուրներ, տզեր, մազակերներ, լվեր:

Ներարկել միանվագ, ենթամաշկային եղանակով խեկ-երին, մեկ-երին, ձիերին և ճագարներին 0.2մլ-ն 10կգ կենդանի քաշի հաշվով, խոզերին՝ 0.3մլ-ն 10կգ կենդանի քաշին, շներին՝ 0.2-0.4մլ-ն 10կգ կենդանի քաշին, թռչուններին՝ 0.1մլ-ն 1 թռչնին, իսկ 5կգ-ից ավել քաշ ունեցող թռչունների դեպքում՝ 0.2 մլ:
5մլ-ից ավել դեղանյութ ներարկելու դեպքում, այն բաժանել 2 մասի և ներարկել տարբեր հատվածներից:

Հակացուցված է հյուծված կենդանիներին, ցանկալի չի ներարկել կովերին լակտացիայի շրջանում, ածան հավերին, մինչև 1 տարեկան մտրուկներին, սպորտային ձիերին և մինչև 6 շաբաթական շներին:

Ալբենոլ-600 բոլյուս

Հակապարազիտային այս պրեպարատի 1 բոլյուսը պարունակում է՝
ալբենդազոլ……600մգ
կապակցող նյութ……...5գ

Ցուցված է խեկ-երի, մեկ-երի մի շարք ինվազիոն հիվանդությունների հարուցիչների դեմ՝ Bunostomum, Cooperia, Chabertia, Haemonchus, Nematodirus, Oesophagostomum, Ostertagia, Strongyloides, Trichostrongylus spp., Dictyocaulus viviparus , D. filarial, Monieza spp., Fasciola hepatica :

Տալ կենդանիներին ներքին եղանակով.

- խեկ-երին՝ 1բոլյուսը 120կգ կենդանի քաշին, իսկ ֆասցելյոզի դեպքում՝ 1 բոլյուսը 70կգ քաշին
- մեկ-երին՝ 1բոլյուսը 70կգ կենդանի քաշին, իսկ ֆասցելյոզի դեպքում՝ 1 բոլյուսը 60կգ քաշին:

Ուտերոտոն

Պրեպարատի 1մլ-ն պարունակում է՝
պռոպռանոլոլ հիդրոքլորիդ……50մգ

Ունի բլոկադող, հակաստրեսային ազդեցություն:
Ցուցված է գրեթե բոլոր գ/տ կենդանիներին, արգանդի ատոնիայի, հիպոտոնիայի, ընկերքի պահումների, արգանդի սուբինվոլուցիայի, հետծննդյան էնդոմետրիտի, խոզերի մետրիտ-մաստիտ-ագալակտիա սինդրոմի, պտղաբերության բարձրացման դեպքերում:

Ներարկել ներմկանային՝ 10մլ-ն 1 կենդանու հաշվով կամ ներերակային՝ 5մլ-ն 1 կենդանու հաշվով: Կանխարգելիչ նպատակով ներարկել 1 անգամ, ընկերքի պահումների դեպքում՝ 3 անգամ, 12 ժամ ընդմիջումներով, արգանդի սուբինվոլուցիայի և հետծննդյան էնդոմետրիտի դեպքում՝ 3 անգամ, 24 ժամ ընդմիջումներով, այլ դեղանյութերի հետ համատեղ, խոզերի մետրիտ-մաստիտ-ագալակտիա սինդրոմի դեպքում՝ 1 անգամ անմիջապես ծնից հետո, արհեստական սերմնավորման դեպքում՝ 1 անգամ, գործողությունից 20-30 րոպե առաջ:
Հակացուցված է ներարկել հղիության, ախտաբանական ծննդաբերությունների ժամանակ և ադրենոմիմետիկների հետ համատեղ ներարկումները: